Կարծիք

Արթուր Ռազմիկի Դավթյանի «Սեփականության իրավունքի էությունը և բովանդակային առանձնահատկությունները տարբեր իրավական համակարգերում. տեսական և իրավահամեմատական հետազոտություն» թեմայով ԺԲ.00.01-«Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Քննարկվող ատենախոսությունը նվիրված է սեփականության ինստիտուտի էության և բովանդակային առանձնահատկությունների հետ կապված հիմնախնդիրների տեսական և իրավահամեմատական վերլուծությանը:

Սեփականությունը ցանկացած հասարակության կենտրոնական իրավական և տնտեսական ինստիտուտներից է, որի վերաբերյալ սկսած հռոմեական իրավաբաններից մինչև մեր օրերի հետազոտողները շարադրել և շարունակում են շարադրել իրենց մոտեցումները ու դիտարկումները: Այդուհանդերձ գիտական հետաքրքրությունը այդ ինստիտուտի վերաբերյալ դեռևս չի դադարել:

Ներկայացրած թեկնածուական ատենախոսության թեմայի արդիականությունը հայրենական իրավագիտության մեջ և հայ հասարակությունում ամենից առաջ պայմանավորված է ոչ բավարար ուսումնասիրությամբ և սոցիալ-տնտեսական մարտահրավերներով, սեփականության իրավունքի երաշխավորված պաշտպանության կառուցակարգի կատարելագործմամբ:

Աշխատանքի հաջողությունը, մեր կարծիքով, պայմանավորված է նրա կառուցվածքով և առաջադրված խնդիրներով ու լուծման եղանակներով: Այս առումով նշենք, որ քննարկվող աշխատանքն ունի կուռ տրամաբանական կառուցվածք. Ներածական մաս, չորս գլուխ, որոնք ներառում են 13 ենթագլուխ, ամփոփում և օգտագործված գրականության ցանկ:

Ատենախոսական աշխատանքի ներածական մասում հեղինակը հիմնավորել է թեմայի հետազոտության արդիականությունը, գիտական ուսումնասիրության վիճակը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակն ու խնդիրները, մեթոդաբանության հիմունքները, գիտական նորույթը, պաշտպանության

Ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության գիտական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլխում հեղինակը հանգամանորեն բացահայտել է սեփականության ինստիտուտի բնութագրական հատկանիշները՝ պատմական և հասարակության զարգացման տեսանկյունից:

Գրախոսվող աշխատանքի երկրորդ գլխում հեղինակը համակողմանի վերլուծության է ենթարկել սեփականության ինստիտուտի իրավական կարգավորման հիմնախնդիրները, ինչպես նաև քննարկել է սեփականության իրավունքի բովանդակության մեկնությունը փիլիսոփայության տեսանկյունից:

Աշխատանքի երրորդ գլխում հեղինակը դիտարկել է սեփականության ինստիտուտի իրավակարգավորումների առանձնահատկությունները ռոմանագերմանական (մայրցամաքային) և անգլոամերիկյան (ընդհանուր իրավունքի) իրավական համակարգերում, վեր է հանել դրանց ընդհանրական և առանձնացնող կողմերը:

Վերջապես, աշխատանքի չորրորդ գլխում հեղինակը հանգամանորեն ներկայացրել է սեփականության իրավունքի պաշտպանության հիմնախնդիրները ներպետական և միջազգային-իրավական կարգավորումներում ու իրավակիրառ պրակտիկայում:

Գրախոսվող աշխատանքի գիտական նորույթը արտահայտվում է սեփականության ինստիտուտի բովանդակության բացահայտման նորարարությամբ, մասնավորապես՝ նորովի են լուսաբանվում սեփականության ինստիտուտի էությունը, բովանդակությունը և սոցիալական նշանակությունը:

Աշխատանքի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ հեղինակը պատշաճ գիտական խորությամբ կատարել է իր առջև դրված խնդիրները, իսկ աշխատանքում ձևակերպված հետևությունները և եզրակացություններն ունեն գիտական և գործնական զգալի նշանակություն:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով հեղինակի կատարած աշխատանքը, ունեք որոշակի դիտողություններ և նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

1.Մեր կարծիքով հեղինակը շատ է տարված «թրաստի» ինստիտուտով և միտված է այն ներդնելու ազգային իրավունքում (որոշակի վերապահումներում) մոռանալով, որ մեր ազգային իրավունքը պատկանում է մայրցամաքային իրավական համակարգին և մեր իրավագիտակցությունը և իրավական միտքը իր բնույթով և էությամբ ազգային է՝ իրավական ավանդույթի տեսանկյունից: Համենայնդեպս, անգլոսաքսների իրավամտածողությունը շատ հեռու է մեր ազգային իրավագիտակցությունից:

2.Հեղինակը սեփականության ինստիտուտը ուսումնասիրել է դասական օրինակով՝ որպես իրավաբանական և տնտեսական կատեգորիա, սակայն արդի ժամանակաշրջանի իրավակարգավորումներում և իրավական պրակտիկայում սեփականությունը հաճախ դիտարկվում է որպես սոցիալական և հասարակական համերաշխության օբյեկտ (նախապայման), ուստի կարելի էր քննարկել նաև սեփականության ինստիտուտը այդ տեսանկյունից:

Սակայն նշված նկատառումները կրում են մասնակի բնույթ և բոլորովին չեն ազդում աշխատանքի դրական արժանիքների վրա:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք, որ Արթուր Ռազմիկի Դավթյանի «Սեփականության իրավունքի էությունը և բովանդակային առանձնահատկությունները տարբեր իրավական համակարգերում. տեսական և իրավահամեմատական հետազոտություն» թեմայով ԺԲ.00.01 մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ամփոփ ու ավարտուն աշխատանք է, լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կանոնակարգի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ. Ստեփանյան

Պրոֆեսոր Հովհաննես Մհերյանի Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ՝ ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու՝ Հայկ Նազարյան